ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԿԱՄԱՐ ԲԿ ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Ջեռուցման (փականների կարգաբերում, խողովակաշարերի սպասարկում, ֆանկոյլների կարգաբերում, զտիչների մաքրում ու փոխարինում),
2. Օդորակման (օդատարների սպասարկում, փականների կարգաբերում),
3. Հովացման (այդ թվում՝ ֆանկոյլների զտիչների փոխարինումը կամ մաքրումը)
4. Հակահրդեհային ու սպրինկլերային, համակարգերի ընթացիկ սպասարկում (այդ թվում, փականների ստուգում, վերազինում, խողովակաշարերի զննում)հակահրդեհային ահազանգման, այդ թվում՝ պարբերական գործնական ստուգում,
5. Ջրամատակարարման ու ջրահեռացման առօրյա, կանխարգելիչ ու վերակազնողական սպասարկման աշխատանքների կառավարում ու կազմակերպում,
6. Ինժեներական համակարգի բաղադրամասերը կազմող կառավարման ավտոմատ համակարգերի, սարքերի, սարքավորումների ու մեխանիզմների՝ դրանց արտադրական տեխնիկական ուղեցույցների պահանջներին համապատասխան՝ պատշաճ գործարկման, շահագործման, պահմանման ու սպասարկման կանոնների կիրառման/կիրարկման, տեխնիկական անվտանգության ու կենսունակության ապահովման հարցերում անհրաժեշտ տեխնիկական աջակցությունը,
7. Կամար Բիզնես Կենտրոնին պատկանող թվով երկու՝ -1 հարկում և տանիքում գտնվող դիզել գեներատորիների տարաների (բակերը) և տարաներից դեպի դիզել գեներատորներ տանող խողովակաշարերի սպասարկում:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սահմանված աշխատանքների ծառայությունների պարբերականություն՝ ամսական:
2. Լրացուցիչ այցելություններ՝ պայմանավորված Բանկի կողմից առաջադրած խնդիրների, թերությունների վերացման անհրաժեշտությամբ:

ԿԱՏԱՐՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

3. Սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցում, որոնք պետք է ներառեն ընթացիկ ծառայությունների մատուցման մեթոդների ձեռքբերման, վերահսկման և գնահատման, ինչպես նաև որակի բարձրացման, հաճախորդների սպասարկման և ծախսերի արդյունավետության բարելավման պայմաններ, համապատասխանեն բիզնեսի ներկա պահանջներին: Մասնագիտացված և/կամ հավաստագրված տեխնիկական և ընդհանուր սպասարկման անձնակազմի ապահովում, որը պետք է համապատասխանի սպասարկման ծանրաբեռնվածության և առօրյա ծառայությունների մատուցման պահանջներին, Գործառնական ուղեցույցների մշակում, որը կապահովի համապատասխան ռեսուրսների/կադրերի առկայությունը ցանկացած ժամանակ՝ Օբյեկտի տեխնիկապես բարդ համակարգերին մասնագիտացված մոտեցում ցուցաբերելու համար:
4. Ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում, որոնք կլուսաբանեն գործառնական խնդիրները և կամփոփեն կանխարգելիչ սպասարկման աշխատանքները, վերանորոգման հայտերը, ինչպես նաև աշխատանքների կառավարման արդյունքները՝ ֆինանսական ժամանակահատվածի շարժմանը համապատասխան: Հաշվետվությունները պետք է պատրաստվեն՝ ընդգրկելով բոլոր համակարգերի սպասարկման աշխատանքները, ներառյալ համապատասխան ամփոփումները:
5. Համապարփակ գործընթացների ապահովում՝ աշխատանքի և հաշվետվությունների մշակման գործառույթներն արդյունավետ համատեղելու համար:
6. Կառավարել վերանորոգման ծառայությունների հարցումները, բյուջետավորման և հաշվապահական պահանջները, աշխատանքների իրականացման վերահսկումը և հաշվետվությունների պատրաստումը:
7. Վարել բոլոր սարքերի ու սարքավորումների սպասարկման գրանցամատյան, որտեղ պարբերաբար պետք է գրանցվեն յուրաքանչյուր սարքի, սարքավորման սպասարկման և/կամ դրա/դրանց վրա կատարված բոլոր աշխատանքների ու միջամտությունների վերաբերյալ տեղեկություններ:
8. Ապահովել կանխարգելիչ սպասարկման և տարածքների վերահսկման աշխատանքներ, ներառյալ մեխանիկական, էլեկտրական, հակահրդեհային/անվտանգության և սանտեխնիկական համակարգերը՝ պահելով վերջիններս պատշաճ աշխատանքային վիճակում, հաշվի առնելով արտադրողի կողմից ուղեցույցներն ու ձեռնարկները և արդյունաբերության լավագույն փորձը:

9. Ապահովել զանգերի ընդունման կենտրոնի ծառայությունների մատուցում՝ Կամար ԲԿ - ին հասցեագրված հարցումները ստանալու, վերականգնման գործընթացը, կանխարգելիչ սպասարկումը ապահովելու, ինչպես նաև արագ և ընդհանուր արձագանքման աշխատանքները կազմակերպելու համար:
10. Ամսական, եռամսյակային և տարեկան ծանրաբեռնվածությունն արդյունավետ նախապատրաստելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվության հետ ծանոթացում, վերլուծություն և դրա պահպանում:
11. Ապահովել Կամար ԲԿ -ի շահառուների բավարարվածության հետազոտում, արդյունքների ամփոփում և համապատասխան բարելավման ծրագրերի ու միջոցառումների մշակում ու իրականացում:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

1. Ապահովել աշխատակազմ ներկայությունը Կամար ԲԿ ում և պատրաստակամությունը արձգանքել առաջին իսկ զանգի դեպքում հետևյալ հեռախոսահամարին ըստ առաջնահերթության՝ բջջային կապի միջոցներով:

ՍԱՐՔԵՐԻ ԽԱՓԱՆՈՒՄ

1. Ապահովել Կամար ԲԿ -ի յուրաքանչյուր տարածքի համար ծառայությունների ամբողջական փոխարինման հնարավորություն, այն դեպքերում, երբ տեղի կունենա սարքավորման խափանում, ներառյալ սույն փաստաթղթում նշված ցանկացած մեխանիկական և էլեկտրական համակարգերը: Այդպիսի ծառայությունները ներառում են անհրաժեշտ վերահսկում, աշխատուժ և սպասարկում: Սարքավորումների անհրաժեշտ փոխարինվող մասերը ձեռք է բերվում ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ կողմից՝ մատակարարի առաջարկությամբ ու ներկայացմամբ: Բոլոր նոր տեղադրված և/կամ փոխարինվող մասերը, սարքերը և/կամ բաղադրիչները պետք է լինեն գործարանային նմուշի, նյութի և պատրաստման տեսանկյունից լինեն անթերի վիճակում: Համակարգի յուրաքանչյուր բաղադրիչ պետք է համապատասխանի արտադրողի կողմից տրամադրված մասնագրերին: Բոլոր մատակարարվող նյութերը պետք է լինեն նոր, առաջնակարգ որակի, որոնք համապատասխանում կամ գերազանցում են օրիգինալ սարքավորումների արտադրողի տեխնիկական մասնագրերի պահանջները: ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ լիազորված պատասխանատու անձի/անձանց կողմից հաստատվելու դեպքում, կարող են կիրառվել օգտագործված օրիգինալ արտադրողի կամ այլ արտադրողի նոր մասերը, եթե դրանք հաստատված են օրիգինալ արտադրողի կողմից՝ որոշակի սարքավորման մեջ կամ համակարգում օգտագործելու համար:
2. Պայմանագրի ստորագրման պահից երեսուն (30) օրվա ընթացքում անհրաժեշտ է Բանկի վերանայմանը և հաստատմանը ներկայացնել մասերի, նյութերի և ապրանքի ցանկը, որոնք ենթակա են պարբերաբար փոխարինման: :
3. Մատակարարը յուրաքանչյուր եռամսյակի հինգերորդ (5-րդ) օրը պետք է Բանկին ներկայացնի փոխարինվող մասերի, նյութերի և ապրանքների գույքագրման ցանկը:
4. Մատակարարը պետք է վարի օգտագործված մասերի և նյութերի գրանցամատյան, որը պարբերաբար ստուգման առարկա է Բանկի կողմից:

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀՏՄԱՆ ՑԱՆԿ

1. Ապահովել բոլոր սարքավորումների, բաղադրիչների և հարակից մասերի անթերի վիճակ Պայմանագրի գործողության ժամկետի ողջ ընթացքում:
2. Կազմել առաջնակարգ վիճակի գնահատման ցանկ, ներառելով այն մասերը, որոնք պահանջում են առաջնահերթ ուշադրություն: Ցանկը պատրաստվում է Մատակարարի կողմից, այն պետք է պետք է վերջնականացվի պայմանագրի ստորագրման օրվանից և հաստատվի Բանկի կողմից երեսուն (30) օրվա ընթացքում:
3. Ապահովել առաջնակարգ վիճակի գնահատման ցանկի սարքավորումները աշխատանքային վիճակում, մինչև տվյալ մասի փոխարինումը:

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

- Բոլոր սարքավորումների և համակարգերի կանխարգելիչ սպասարկման աշխատանքները պետք է իրականացվեն՝ համաձայն նախապես կազմված հաջորդական պլանի: Կանխարգելիչ սպասարկումը պետք է կանխարգելի և/կամ անհապաղ լուծի այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

1. Չնախատեսված խնդրի անհապաղ լուծում
2. Նախատեսված խնդրի լուծման պլանավորում
3. Բարձր խոնավություն
4. Վերահսկման խափանում
5. Կափույրի աշխատանքի խափանում Stuck dampers
6. Ֆիլտրների աղտոտվածություն
7. Օդատարների կաթոցներ
8. Օդի դիսբալանս
9. Ջրի դիսբալանս
10. Ջերմության թույլ փոխանցում
11. Փականների խափանում
12. Խցանված ֆիլտներ/ճաղեր Plugged strainers
13. Սարքավորման անջատում
14. Սարքավորման խափանում
15. Թույլ ամրացված լարանցումներ
16. Կեղծ անջատումներ
17. Փականների կաթոցներ
18. Սարքերի կաթոցներ
19. Խողովակների ժանգոտում և կոռոզիա
20. Վնասված մեկուսացում
21. Չափազանց մեծ աղմուկ
22. Չափազանց մեծ վիբրացիա/տատանում շենքի կառավարման համակարգ
23. Անջատիչներ
24. Սենսորների գլխիկներ

- Մատակարարը պետք է ներկայացնի սարքավորումների կանխարգելիչ սպասարկման գրաֆիկը յուրաքանչյուր ամսվա 5-ից ոչ ուշ կամ Բանկի պահանջով:

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

1. Մատակարարը պետք է իրականացնի Կանխարգելիչ սպասարկման հաշվառում՝ սարքավորման կամ համակարգի յուրաքանչյուր մասի համար:
2. Գրառումները պետք է հաստատվեն Բանկի կողմից և արտացոլեն կատարված աշխատանքները, դրանց հերթականությունը և իրականացման ամսաթիվը:
3. Մատակարարը պետք է թարմացնի Կանխարգելիչ սպասարկման գրառումները ամեն շաբաթ և ներկայացնի Բանկի ն՝ ոչ ուշ, քան յուրաքանչյուր ամսվա 5-ը:
4. Բանկի պահանջով պետք է ներկայացվեն նաև գրառումների էլեկտրոնային տարբերակները:
5. Կանխարգելիչ սպասարկման արձանագրման գրառումները մատակարարի կողմից պետք է ներկայացվեն Microsoft Office 2010/AUTOCAD ձևաչափի ֆայլերով:

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

1. Մատակարարը պետք է անհապաղ արձագանքի սարքավորումների կամ Կամար ԲԿ -ի հիմնական (ջեռուցման, սանտեխնիկական, հակահրդեհային) սարքավորումների կամ համակարգերի խափանումներին:
2. Մատակարարի աշխատակազմը պետք է շարունակական աշխատանք կատարի՝ առանց ուշադրություն դարձնելու սովորական աշխատանքային ժամերին, մինչև կրիտիկական խափանումը չշտկվի:

ԱՌՕՐՅԱ /ԸՆԹԱՑԻԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

1. Բանկը առօրյա/ընթացիկ սպասարկման և վերանորոգման հայտերը պետք է ներկայացնի Մատակարարին բանավոր կամ աշխատանքային հրահանգի տեսքով: Առօրյա/ընթացիկ սպասարկումը և վերանորոգումը այն ծառայություններն են, որոնք չեն կարող որակվել որպես կանխարգելիչ սպասարկում, արտակարգ իրավիճակի արագ արձագանքում կամ սարքավորումների սպասարկում:

ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

1. Մատակարարը պատասխանատու է համակարգերի և սարքավորումների պլանային և ոչ պլանային սպասարկման և վերանորոգման համար:
2. Մատակարարը պետք է իրականացնի բոլոր աշխատանքների վերահսկումը, աշխատուժի, իր գործունեության հետ առնչվող նյութերի, սարքերի, գործիքների կամ հատուկ սարքավորումների տրամադրումը և ծառայությունների մատուցումը, որպեսզի բոլոր սարքավորումները գործեն առաջնակարգ ռեժիմով՝ ծառայությունների նկատմամբ սպասումների համաձայն:

ԿԱՏԱՐՈՂԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ

3. Մատակարարը պետք է ներկա լինի Կամար ԲԿ -ի համար ոչ աշխատանքային չհամարվող յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 08:00-ից մինչև 20:00-ն ընկած ժամանակահատվածում՝ հարցումներին և հայտերին պատշաճ կերպով արձագանքելու, առաջացած խնդիրները վերացնելու, լրացուցիչ բացատրություններ և տեղեկատվություն տրամադրելու համար:
4. Մատակարարը պետք է նշանակի Ծրագրի կառավարիչ՝ Կամար ԲԿ-ին վերաբերող հարցերով յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 08:00-ից մինչև 20:00-ն զբաղվելու նպատակով, ինչպես նաև պետք է հետևյալ՝ ըստ առաջնահերթության հեռախոսահամարով հասանելի լինի պատասխանելու ոչ աշխատանքային ժամերին առաջացած խնդիրներին և հարցերին:

ԸՍՏ ՀԱՅՏԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԵՐ

1. Արագ արձագանքում Կամար ԲԿ - ի Բանկի տարածքների խնդիրներին՝ 24/7 ռեժիմով (ոչ աշխատանքային ժամերին աշխատակցի ժամանում 40-60 րոպեի ընթացքում):
2. Վերականգնման հայտերի ընդունում հեռախոսով՝ 08:00 – 19:00 աշխատանքային ժամերին:
3. Էլ. Փոստի, հեռախոսազանգի ինչպես նաև գրավոր (գրության) միջոցով վերականգնման հայտերի ընդունում 24/7 ռեժիմով: Կատարված աշխատանքների մասին Կատարողը պարտավոր է ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել գրավոր տեղեկանք՝ կատարված աշխատանքների մանրամասների մասին:
4. Մատակարարը պետք է ի վիճակի լինի ցանկացած ժամանակ ընդունելու և ընթացք տալու ինչպես Բանկից, այնպես էլ Կամար ԲԿ - ում շուրջօրյա պահնորդական ծառայություն իրականացնող պատասխանատուներից ստացված հեռախոսազանգերը:

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

1. Բանկը մատակարարի ներկանացուցչի ներկայությամբ իրավունք ունի իրականացնել ինչպես պլանավորված, այնպես էլ չնախատեսված պարբերական ստուգումներ Կամար ԲԿ - իԲանկի ողջ տարածքում, ստուգել սարքավորումները և մատակարարի արձանագրությունները:
2. Մատակարարը գրավոր կերպով կտեղեկացվի ստուգումների ընթացքում հայտնաբերված թերությունների մասին, որոնք պարտավոր է վերացնել կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետներում:

ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋԱՎԱՅՐԵՐ / ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

3. Բանկի գործունեության անընդհատությունն ապահովելու նպատակով Կատարողը պարտավոր է վերահսկել Կամար բազմաֆունկցիոնալ բիզնես կենտրոնի Բանկի ստորև նշված սարքավորումները, կարևոր միջավայրերը, այլ համակարգերը, դրանց սպասարկումը ու տեխնիկական վիճակի, սպասարկման որակի մասին ծանուցել Բանկին, եթե առկա է վտանգ՝ դրանց թերի աշխատանքի, շահագործման և վնասի

Տարածք/ Սարքավորում	Միջավայր / Սարքավորման նկարագրություն	Քանակ	Տեղակայման վայր	Զբաղեցրած տարածք
Նշում. Կարևոր միջավայրերը այն 24/7 տարածքներն են կամ վայրերը, որտեղ ենթակառուցվածքների էլեկտրասնուցումը կատարվում է UPS –ների և գեներատորի միջոցով և պահանջվում է 24/7 ահազանգման մոնիթորինգ:				
ԿԱՄԱՐ ԲԿ				
Օդփոխության, օդորակման սարքեր	Ciat և Roccheggiani	1	տանիք	

Հատակի կափույրներ	Օդի փոփոխական ծավալ (VAV), VFD, ծուխ, և այլն	7	բոլոր հարկերում	
Հատակի հակահրդեհային փականներ	Գոտու վերահսկման փականներ	17	բոլոր հարկերում	
Հատակի էլ. սնուցում/ հաղորդակցման սենյակներ	Բաշխման վահանակ/2-րդ հարկի օպերցիոն սենյակ	6	բոլոր հարկերում	
ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՆՄԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ				

Այլ համակարգեր/սարքավորումներ

Item	Description	Quantity	Unit	Notes
Firefighting Water Sprinkler System	Diesel, Electric, Jockey; Floor Zone Control Valves			
Air Supply/Return Dampers	Lindab w/ Belimo Actuators			
Variable Air Volume Dampers	Lindab w/ Belimo Actuators			
Smoke Dampers	Lindab; spring based dampers			
Fire Dampers	Lindab w/ Belimo Actuators			
Fan coil Cassette	Aermec FCLI 32, FCLI 42, FCLI 62	239		
Piping System	PPR Pipes			
Riser Piping System	Metal			
Electrical Panels	Legrand Distribution Panels	1	building system	
Plumbing System as Whole	Drinking Water Supply/Drainage; PPR & Various types of pipes	1	building system	
Building Management System (BMS)	Honeywell	1	building system	

- ✓ Ֆանկոյլներ – 239 հատ
- ✓ Հեռավոր տերմինալներ (RTU) – 1 հատ
- ✓ Օդի փոփոխական ծավալ (VAV) մոդուլատիվ կափույրներ modulating dampers – 34 հատ
- ✓ Օդի փոփոխական ծավալ (VAV) մեկուսացնող կափույրներ isolating dampers – 44 հատ
- ✓ Լուսավորման համակարգ
- ✓ Էլեկտրական պանելներ
- ✓ Սանտեխնիկական համակարգ որպես ամբողջություն
- ✓ Շենքի կառավարման համակարգ (BMS)
- ✓ Հաշվիչների համակարգ
- ✓ Ավտոմատ և ձեռքի փականներ

Ստորև ներկայացված են Ամերիաբանկում առկա սարքավորումների քանակները ըստ հարկերի

List of Equipment/Ameriabank																	
N	Floor	Aermec fan coil units Qty (pc)		Motion/presence sensors Qty (pc.)		CO sensors/HVAC Qty (pc.)		VAV HVAC Qty (pc.)		Geberit urinal system Qty (pc.)		Faucet, siphon Qty (pc.)		WC solenoid valve Qty (pc.)	
1	(-1)	AERMEC 32	5	AX-OCF-230FVF	-	AX-GS-CD-T51EV	-	LMV-D3-MP	2	GROHE	2	GROHE	2	PU225A-06	1

		AERMEC 42	1												
		AERMEC 62	1												
2	1	AERMEC 32	7	AX-OCF-230FVF	1	AX-GS-CD-T51EV	1	LMV-D3-MP	6	GROHE	7	GROHE	5	PU225A-06	1
		AERMEC 42	2												
		AERMEC 62	2												
3	2	AERMEC 32	42	AX-OCF-230FVF	7	AX-GS-CD-T51EV	7	LMV-D3-MP	18	GROHE	6	GROHE	4	PU225A-06	2
		AERMEC 42	9												
		AERMEC 62	1												
4	3	AERMEC 32	22	AX-OCF-230FVF	10	AX-GS-CD-T51EV	5	LMV-D3-MP	14	GROHE	11	GROHE	7	PU225A-06	2
		AERMEC 42	18												
		AERMEC 62	12												
5	4	AERMEC 32	3	AX-OCF-230FVF	12	AX-GS-CD-T51EV	4	LMV-D3-MP	12	GROHE	15	GROHE	13	PU225A-06	2
		AERMEC 42	24												
		AERMEC 62	10												
6	5	AERMEC 32	2	AX-OCF-230FVF	8	AX-GS-CD-T51EV	2	LMV-D3-MP	12	GROHE	12	GROHE	7	PU225A-06	2
		AERMEC 42	25												
		AERMEC 62	11												
7	6	AERMEC 32	5	AX-OCF-230FVF	14	AX-GS-CD-T51EV	7	LMV-D3-MP	18	GROHE	15	GROHE	9	PU225A-06	2
		AERMEC 42	21												
		AERMEC 62	16												

ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐ

1. Ջրի որակը պետք է փորձարկվի հավաստագրված և անկախ փորձագիտական ընկերության կողմից առնվազն եռամսյակը մեկ անգամ և, անհրաժեշտության դեպքում, հետազոտվեն ջրի որակի խնդիրները: Բացահայտված խնդիրները պետք է անհապաղ լուծում ստանան: Նշված փորձագիտական ծախսերը կրում է Բանկը:
2. Մատակարարը պարտավոր է ապահովել ջրի մատակարարման սարքերի մաքրությունը և անխափան աշխատանքը:

ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

Գործունեություն

1. Վերահսկել էներգիայի սպառումը և ապահովել, որ Կամար ԲԿ -ի Բանկի բոլոր համակարգերն աշխատեն իրենց արդյունավետության առավելագույն հնարավորությամբ: Ծառայությունները պետք է մատուցվեն Կամար ԲԿ -ի Բանկի տարածքներում:
2. Առաջարկել միջոցներ արդյունավետության բարձրացման համար՝ փոխելով գործառնական գործընթացները կամ ավելի շատ օգտագործելով էներգախնայող սարքավորումներ: Վերահսկել արդյունաբերության միտումները և կանոնակարգերը և, անհրաժեշտության դեպքում, ներկայացնել մրցունակ և շուկայի հուսալի նոր հնարավորությունների աղբյուրներ:

Պարտավորություններ

1. Ապահովել, որ Կամար ԲԿ - ի Բանկի վերահսկման բոլոր տեխնոլոգիաներն աշխատեն էներգախնայողության ռեժիմով:

2. Գործարկել Կամար ԲԿ-ի Բանկի բոլոր համակարգերը՝ համաձայն միջոցառումների և ուղեցույցների պահանջների:
3. Ապահովել, Կամար ԲԿ-ի Բանկի տարածքում 24/7 ռեժիմով շենքի կառավարման օպերատորների ներկայություն:
4. Եռամյակային կտրվածքով ներկայացնել էներգախնայողության ողջամիտ գաղափարներ:
5. Ապահովել, որ էներգախնայողության բոլոր գործընթացները իրականցվեն տեղական, պետական և ազգային օրենքների և կանոնակարգերի համաձայն:

ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ/ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործունեություն

1. Տրամադրել հակահրդեհային/անվտանգության ծառայություններ Կամար ԲԿ - ի Բանկի բոլոր տարածքներում: Ֆունկցիոնալ բաղադրիչները պետք է ներառեն համապատասխանություն կանոնակարգերին, կանխարգելիչ սպասարկում, արձագանքում սարքավորումների խափանումներին, հակահրդեհային անվտանգության սարքավորումների արդյունավետ օգտագործում և գործառնական ենթակառուցվածքների ծրագրեր:

Պարտավորություններ

2. Սպասարկել այնպիսի հակահրդեհային անվտանգության սարքավորումները, ինչպիսիք են հակահրդեհային վահանակները, ահազանգման համակարգերը, ծխի և ջերմության ցուցիչները/տվիչները, սպրինկլերային, խոհանոցում հրդեհի մեկուսացման համակարգերը, արտակարգ իրավիճակի լույսերը, արտաքին լուսավորությունը և այլն, ապահովել շարունակական գործունեությունը և արտակարգ իրավիճակներում համապատասխան գործընթացների իրականացումը:
3. Անհապաղ արձագանքել հրդեհի ազդարարման բոլոր ազդանշաններին՝ համաձայն իրավիճակների արձագանքման ընդունված սանդղակի պահանջների և համագործակցել անվտանգության և տեղական ԱԻՆ բաժնի հետ ազդանշանի աղբյուրը գտնելու և նորոգելու համար՝ համաձայն ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության ու հարակից իրավական ակտերի:
4. Սպասարկել բոլոր շարժական կրակմարիչները և հրդեհաշիջման խողովակները՝ ընդունված չափանիշների համաձայն:
5. Ապահովել հակահրդեհային անվտանգության սարքավորումների պատշաճ աշխատանքը հոսանքազրկումների կամ այլ արտակարգ իրավիճակների պայմաններում՝ պարբերաբար փորձարկելով սարքավորումների միացումները պահուստային գեներատորների համակարգին:
6. Իրականացնել բոլոր հակահրդեհային անվտանգության սարքավորումների հատուկ սպասարկումը և փորձարկումը, ինչպիսիք են՝ արտահոսքի, ազդարարման, ծխի/ջերմության տվիչների և այլ փորձարկումները՝ համաձայն ընդունված չափանիշների կամ ՀՀ օրենքների:
7. Ապահովել պատշաճ որակավորված և հավաստագրված անձնակազմի առկայությունը հակահրդեհային անվտանգության ծառայությունների մատուցման համար՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Համոզվել, որ բոլոր սարքավորումները պիտակավորված են պատշաճ կերպով:
8. Առաջարկել հնարավորություններ անվտանգության բարելավման և աշխատանքների ընդհատումները նվազեցնելու համար՝ բացահայտելով հնարավոր թույլ տեղամասերը, սարքավորումները կամ գործընթացները:
9. Համոզվել, որ Կամար ԲԿ - ի բոլոր անցուղիները, աստիճանավանդակները և ելքի ուղիները զերծ են բոլոր արգելքներից և խոչընդոտներից:

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործունեություն

1. Տրամադրել ջեռուցման, օդորակման և օդափոխության (այսուհետ՝ ՋՕՕ) (HVAC) համակարգի ծառայություններ Կամար ԲԿ - ի Բանկի բոլոր նախատեսված տարածքներում: Մատակարարի պարտականությունները ներառում են կանխարգելիչ և կանխատեսող սպասարկում նորոգման հայտերի արձագանքում, կանխարգելիչ սպասարկման վերանորոգումներ, մեխանիկական

սարքավորումների արդյունավետ գործարկում և ենթակառուցվածքների և կապիտալ բարեփոխումների ծրագրեր։

Պարտավորություններ

1. Գործարկել և սպասարկել Կամար ԲԿ - ի Բանկի ենթակառուցվածքների այնպիսի սարքավորումները, ինչպիսիք են օդափոխության համակարգերը, սերվերային սենյակի օդորակման համակարգերը, օդմղիչ համակարգերը, ֆանկոյլները, թարմ օդի ներմուծման համակարգը, բաժանարար համակարգերը, օդի փոփոխական ծավալի տուփերը, փոփոխական հաճախության գործարկիչները, տերմոստատները և այլն, ապահովելու դրանց անխափան աշխատանքը առանց անկախատեսելի ընդհատումների, որոնք կարող են անդրադառնալ ընդհանուր գործունեության վրա։
2. Փոխարինել ՋՕՕ համակարգի ֆիլտրները և մաքրել խոհանոցի օդամղիչ համակարգերը՝ արտադրողի կողմից առաջարկվող կամ Բանկի տարածքների պահանջների և չափանիշների համաձայն։
3. Ապահովել նախատեսված էլեկտրական և մեխանիկական գործառույթները հոսանքազրկումների և այլ արտակարգ իրավիճակների պայմաններում։ Եռամսյակի կտրվածքով փորձարկել մեխանիկական սարքավորումները, որոնք միացված են պահուստային համակարգերին կամ գեներատորի ամսական փորձարկումների ժամանակ ստուգել Կամար ԲԿ - ի Բանկի տարածքների համակարգերի կապը պահուստային աղբյուրների հետ։
4. Գործարկել և սպասարկել Կամար ԲԿ - ի Բանկի տարածքների ավտոմատ համակարգերը, ապահովելու պատշաճ աշխատանքը և միացված սարքավորումների աշխատանքի ժամանակացույցը՝ էներգախնայողության, շրջակա միջավայրի պահպանության և օդի որակի վերահսկման նպատակով։
5. Իրականացնել մեխանիկական համակարգերի համապարփակ կանխարգելիչ սպասարկում, որը պետք է ներառի մինիմալ վիբրացիայի վերլուծություն, հողմային հոսանքների փորձարկումը, յուղի հետազոտությունը, թերմոգրաֆիկ և Մեզգերի փորձարկումները (այսինքն՝ անջատիչների մեկուսացումը, հաղորդիչները և այլն)։
6. Իրականացնել մեխանիկական համակարգերի վերանորոգող սպասարկում, որոնք ի հայտ են եկել ընթացիկ կանխարգելիչ սպասարկումների և ստուգումների ընթացքում և ապահովել սարքավորումների վստահելի և արդյունավետ աշխատանքը։
7. Վերահսկել տրամադրվող ջրի մաքրման ծառայությունները մեխանիկական սարքավորումների վստահելի և արդյունավետ աշխատանքը ապահովելու համար։
8. Ապահովել որակավորված և հավաստագրված աշխատակազմի առկայությունը ՋՕՕ ծառայությունների մատուցման համար, որոնք պետք է իրականացվեն համաձայն տեղական, պետական, և ազգային օրենքների և կանոնակարգերի համաձայն։
9. Արձագանքել արտակարգ իրավիճակներին՝ համաձայն սահմանված գործընթացների, որոնք լուծում են տիպիկ իրավիճակները նվազագույն խոչընդոտելով ընդհանուր գործունեությունը։
10. Արձագանքել նորոգման հայտերին՝ համաձայն սահմանված պահանջների։
11. Առաջարկել հնարավորություններ՝ համակարգի հուսալիության բարձրացման համար և նախապատրաստվել զարգացման ապագա ծրագրերին։
12. Առաջարկել հնարավորություններ նվազեցնելու էներգիայի սպառման ծախսերը՝ առանց խոչընդոտելու ընդհանուր գործունեությունը։
13. Ապահովել աշխատանքների իրականացումը համաձայնԲանկի տարածքների անվտանգության ծրագրերի, քաղաքականության և գործընթացների։ Ապահովել սարքավորումների պատշաճ պիտակավորումը։
14. Ապահովել նախագծերի արդիականությունը ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային ֆայլերի տարբերակով։
15.

ՍԱՆՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործունեություն

1. Տրամադրել սանտեխնիկական ծառայություններ Կամար ԲԿ - ի Բանկի տարածքների բոլոր նախատեսված տարածքներում։ Ֆունկցիոնալ բաղադրիչները ներառում են կանխարգելիչ սպասարկում, նորոգման հայտերի արձագանքում նորմալ աշխատանքային ժամերին և միջոցառումների ժամանակ, ինչպես նաև գիշերվա և շաբաթ-կիրակի օրերին, սանտեխնիկական սարքերի արդյունավետ գործարկում և ենթակառուցվածքային ծրագրեր։

Պարտավորություններ

1. Սպասարկել Կամար ԲԿ - ի Բանկի տարածքների ենթակառուցվածքների սարքավորումները և համակարգերը, ինչպիսիք են՝ քաղաքային ջրագծերը, կոյուղագծերը, տարածքների ջրատարներ, հորդառատ անձրևների համար նախատեսված ջրատարներ, ջրի ֆիլտրներ, դրենաժներ և այլն, աշխատանքների շարունակականությունն ապահովելու համար:
3. Ապահովել որակավորված և հավաստագրված աշխատակազմի առկայություն սանտեխնիկական աշխատանքների իրականացման համար՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Ապահովել, որ բոլոր սարքավորումները լինեն պատշաճ կերպով պիտակավորված սանտեխնիկական ջրագծերի ինֆորմացիայով:
4. Ապահովել, որ բոլոր աշխատանքներն իրականացվեն Կամար ԲԿ - ի Բանկի տարածքների անվտանգության քաղաքականության և գործընթացի համաձայն:
5. Անհապաղ կերպով արձագանքել բոլոր արտահոսքների խնդիրներին, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ իրավիճակի շտկման համար:
6. Արձագանքել արտակարգ իրավիճակներին հնարավորինս արագ և համաձայն արձագանքման համար նախատեսված պահանջների:
7. Արձագանքել նորոգման հայտերին համաձայն արձգանքման համար նախատեսված պահանջների:
8. Առաջարկել հնարավորություններ կոմունալ ծառայությունների ծախսերը կրճատելու ուղղությամբ և կամ մեծացնել սարքերի հուսալիությունը: Բոլոր բարեփոխումների գործընթացներն իրականացնել ըստ հաստատված ծավալների, բյուջեի և ժամանակացույցի:
9. Ինչպես նաև այլ գործառույթներ՝ ըստ անհրաժեշտության:

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Գործունեություն

1. Տրամադրել համապարփակ կանխարգելիչ սպասարկման ծառայություններ ապահովելու, որ Կամար ԲԿ - ի Բանկի տարածքների բոլոր սարքավորումները, բաղադրիչները և համակարգերը աշխատեն պատշաճ կերպով Կամար ԲԿ - ի Բանկի տարածքներում:

Պարտավորություններ

1. Ապահովել, որ առկա սարքավորումները սպասարկվեն և նորոգվեն այնպես, որ աշխատեն պատշաճ կերպով, ապահովելով հուսալիություն ընդհանուր գրասենյակային տարածքներում, հանդիսությունների սրահում, կայանատեղիում և այլ հատուկ նշանակության վայրերում:
2. Գրասենյակային գործունեությունը չպետք է խաթարվի կանխարգելիչ սպասարկման աշխատանքների կամ սարքավորումների խափանման պատճառով:
3. Ապահովել որակավորված և հավաստագրված աշխատակազմի առկայություն սպասարկման և նորոգման աշխատանքների իրականացման համար, համաձայն ընդունված չափանիշների և երաշխիքային պայմանների:
4. Ապահովել համապատասխանությունը ոլորտը կարգավորորող՝ ՀՀ օրենսդրությանը և նորմատիվ ակտերին:
5. Պատրաստել հաշվետվություններ, որոնք կհաստատեն, որ սարքավորումները սպասարկվում են համաձայն արտադրողի կողմից սահմանված կանխարգելիչ ծրագրերի: Հաշվետվությունը պետք է ներառի .

   - Կանխարգելիչ սպասարկման նախատեսված և ըստ պլանի իրականացված կարևոր գործառույթների թիվը:
   - Կանխարգելիչ սպասարկման նախատեսված և ըստ պլանի իրականացված ընթացիկ գործառույթների թիվը:
   - Կանխարգելիչ սպասարկման հետաձգված ընթացիկ գործառույթների կարգավիճակը:
   - Կանխարգելիչ սպասարկման ընթացիկ գործառույթների վրա ծախսված մարդ/ժամ հաշվարկը:
   - Հայտերի բավարարման և կանխարգելիչ սպասարկման առօրյա աշխատանքների իրականացումը:
   - Կանխարգելիչ սպասարկման հիմնական խնդիրների և նպատակների իրականացում համաձայն ծառայությունների նկատմամբ սպասումների բաժնի:
   - Նորոգման հայտերի ամփոփում, որոնք ի հայտ են եկել կանխարգելիչ սպասարկման աշխատանքների արդյունքում, և ինչի համար պահանջվում է լրացուցիչ աշխատանք՝

սարքավորման գործառույթները նորոգելու կամ պահպանելու համար (ներառում է ծավալներ, նկարագիր և իրականացման կարգավիճակ)։

6. Մշակել արդյունավետ համագործակցության ծրագրեր մատակարարի կողմից լիազորված պատասխանատու անձին՝ Տարածքի կառավարիչին («facility manager») պատշաճ կերպով առաջացած խնդիրների մասին տեղեկացնելու համար։
7. Ինչպես նաև այլ գործառույթներ՝ ըստ անհրաժեշտության։

ՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՅՏԵՐ

Գործունեություն

1. Ժամանակին արձագանքել նորոգման հայտերին համաձայն սահմանված պահանջների։ Ծառայությունները ներկայացնել Բանկին՝ նշելով ծավալը, իրականացման ժամանակը, համապատասխանությունը պայմանագրի պայմաններին։

Պարտավորություններ

1. Տրամադրել պատշաճ միջոցներ նորոգման հայտերի բավարարման համար համաձայն սահմանված պահանջների։
2. Ապահովել ծառայությունների մատուցման որակը, համապատասխանությունը և մասնագիտական իրականացումը։
3. Մշակել և իրականացնել Կամար ԲԿ - ի ազդարարման համակարգերի արձագանքման գործընթացներ, որոնք կարող են առաջանալ նորմալ աշխատանքային ժամերին և ոչ աշխատանքային օրերին։ Ոչ աշխատանքային ժամերին առաջացած հայտերի բավարարումը ուղղված է բոլոր այն խնդիրների լուծմանը, որոնք կարող են խաթարել ընդհանուր գործունեությունը, ունենալ մեծ ֆինանսական հետևանքներ կամ հանգեցնել գույքի ֆիզիկական վնասի։
4. Ապահովել, որ նորոգման հայտերը բավարարվեն ոլորտը կարգավորորող՝ ՀՀ օրենսդրությանը և նորմատիվ ակտերին, ինչպես նաև Օբյեկտի անվտանգության ծրագրերի և պահանջների համաձայն։
5. Վերլուծել նորոգման նույն աշխատանքի հայտերը և ձեռնարկել միջոցներ կրկնվող հայտերի քանակը նվազեցնելու համար։
6. Նորոգման հայտերի տվյալների բազայի ստեղծում և ամսական հաշվետվության պատրաստում։
7. Ինչպես նաև այլ գործառույթներ՝ ըստ անհրաժեշտության։

ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՄԱՐ ԲԿ-Ի ՊԱՀԱՆՋՆԵՐ

Առաջնահերթություն 1	Առաջնահերթություն 1-Ա	Առաջնահերթություն 2
Անհապաղ արձագանքում (40-60րոպեի ընթացքում)	**Անհապաղ արձագանքում միջոցառումների ժամանակ (70 րոպեի ընթացքում)**	**Նույն օրը – կատարում 24 ժամվա կամ հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում**
Օրինակներ	**Օրինակներ**	**Օրինակներ**
Օդի որակ – տարօրինակ հոտ (գազի, կոյուղու, այրված լարերի)	Մուտքի/ելքի դռների խափանում	Խմելու ջրի որակի խնդիրներ
Օբյեկտի պահուստային համակարգերի միացում	Օդափոխության ջերմաստիճանի խնդիրներ	Ջրատարների, ավազանների կամ ջրահեռացման համակարգի խցանում
Սպինգլերային համակարգի ահազանգում կամ արտահոսք	Օդորակման համակարգի աղմուկ կամ սարքավորման խափանում	Ոչ կրիտիկական սարքավորման համար հոսանքի բացակայություն
Ջերմաստիճանի խաթարում (շատ շոք կամ շատ ցուրտ)	ՋՕՕ սարքավորումների խափանման նորոգում	ՋՕՕ –ի ոչ պատշաճ աշխատանք
Արտահոսք խողովակներից կամ սանտեխնիկական այլ սարքերից	Զուքարանակոնքի կամ լվացարանի խցանում	Ոչ աշխատանքային ժամերին ՋՕՕ-ի նորոգման հայտ
ՋՕՕ-ի աշխատանքի փոխակերպում կրիտիկական միջավայրի համար	Ջրի տաքացուցիչի կամ կաթսայի խնդիր	

Օբյեկտում ջրի կաթոցներ/ժամանակավոր նորոգում		
Սարքի հոսանքի առկայծում		
Խմելու ջրի որակի խնդիրներ		

Հատուկ պայմաններ

1. Վթարների ու խափանումների վերացումը իրականացվում է օպերատիվ կերպով նաև ոչ աշխատանքային ժամերին: Պատվիրատուի Հայտերի արձագանքման տևողությունը աշխատանքային ժամերին՝ ոչ ուշ քան 30 րոպե, և ոչ ուշ քան 45 րոպե, ոչ աշխատանքային ժամերին:
2. Վթարային ու վերականգնողական աշխատանքների կազմակերպումը և կառավարումը կատարվում է 24/7 ժամային գրաֆիկով:
3. Պատվիրատուի ինժեներական սարքերի, սարքավորումների և մեխանիզմների փոխարինումները կամ տեղափոխությունները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի ներկայացուցչի հետ և աշխատանքներն իրականացնելուց հետո համապատասխան նախագծերում, ըստ փաստացի կատարված աշխատանքների, կատարվեն նախագծերի փոփոխություններ, եթե դա անհրաժեշտ է: Ընդ որում, փոփոխված նախագծերի արխիվացման համար փաստաթղթերի նախագծերը պետք է ներկայացվեն Բանկի ներկայացուցչի հաստատմանը:
4. Ծառայությունների մատուցման նպատակով Մատակարարը ներդնում է ծրագրային համակարգ՝ Պատվիարտուի կողմից հայտերի արձագանքման և սպասարկման նպատակով:
5. Թվարկված համակարգերի հետ կապված աշխատանքներ իրականացնելու նպատակով Բանկը կարող է դիմել Մատակարարին աշխատանքների համակարգման և վերահսկման համար՝ լրացուցիչ պայմանավորվածությամբ:
6. Ծառայությունների մատուցման ընթացքում Բանկը Մատակարարին անհրաժեշտ գործիքակազմով ապահովելու պարտականություն չի կրում:
7. Պայմանագրի ստորագրման պահից մեկ ամսվա ընթացքում Կատարողի կողմից պետք է պատրաստվի և Պատվիրատուին փոխանցվի համակարգերի կրիտիկական պահեստամասերի ցուցակ, որոնք ցանկալի է ունենալ բանկի պահեստում:

Բացառություններ

Ծառայությունների վճարը չի ներառում Համակարգի ձևափոխումները, բաղադրամասերը կազմող կառավարման ավտոմատ համակարգերի, սարքերի, սարքավորումների ու մեխանիզմների, դրանց լրակազմերի ու պահեստամասերի՝ նեղ մասնագիտացված վերանորոգում, փոխարինում ու նշված բոլոր ապրանքների ծախսերը, ձեռք բերումն ու մատակարարումը: Ծառայությունները չեն տարածվում սերվերային և UPS-ային սենյակների և «կարմիր» վարդակների ցանցին: